

ՊԷՏԻՐԻԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Ըստ պատական բերանացի աւանդութիւններու)

Երբ ուշի ուշով հետեինք մեր պատմութեան քաղաքական ընթացքին, բացայայտ կը տեսնենք Հայաստանն ու Քիւրդիստանը նուաճումներու ասպարէզ մը Պարսիկներու ու Թիւրքերու համար, որոնց ոչ մէկը իր վերջնական տիրապետութիւնը բացարձակ սահմանին մէջ դրած էր, այդ երկիրներու վրայ. միւս կողմէն կային Քիւրդերու ու Հայերու ընդվզումները, երբեմն ի միասին, երբեմն առանձին, երբեմն ալ իրարու դէմ. և ամէն պարագային միտած Թիւրք կամ պարսիկ տէրութիւններէն մէկուն:

Ուրեմն քաղաքական ասպարիզի վրայ կան. 1. Թիւրք կառավարութիւնը. 2. Պարսիկը. 3. Քիւրդ Տէրէ-պէյիները 4. Հայ իշխանները:

Կայ և Տրդր, ժողովուրդը, բայց՝ կրաւորական դիրքի մէջ միշտ ենթակայ՝ հարստահարութիւններու և զօրեղին կողմը հակելու. տեւական խռովութիւններէն, հալածանքներէն ստորկացած՝ չի կրնար բարձրանալ իր իրաւունքներու սահմանները ու հանգստութիւն վնասուելով կ'իշնայ անոր գլխը որ համեմատաբար լաւ կը գտնէ իրեն համար, և երբեմն ճարահատ՝ կը յանձնուի որուն որ պատահի:

Ահա ասով կը բացատրուի Հայ ժողովուրդի՝ իշխողական այդ զանազան կողմերուն հակելու իրականութիւնը:

Իսկ Հայ իշխաններն ալ մասամբ բացառութիւն չէին կազմեր ժողովուրդէն, և մասամբ իրենք ալ ունենալով իրենց աւանդական դիրքեր, չէին ուզեր բացարձակ ստրուկներ դառնալ, և պարագաներու համեմատ կը միսնային քաղաքական այս կամ այն խմբակին:

Այս խառն պարագաներու մէջ, երբ ոչ մէկ զօրեղ պետութիւնը իր հրամայող ու բարեկարգ իշխանութիւնը չէր կարող զգալի ընել տալ, Քիւրդ իշխանութիւնը կը կազմուէր,